«NEW GENERATION»
Humanitarian Non-Governmental Organization

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ»
Մարդասիրական Հասարակական Կազմակերպություն

# #IDAHOT 2016

**«ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԹԵՄԱՅՈՎ ԿՈՆՖԵՐԱՆՍ**

# ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՁԵԿՈՒՅՑ




Հայաստան, Երևան
Հունիս 2016

## ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ 2016 թ.-ի մայիսի 17-ին կազմակերպել էր «Օրենսդրական փոփոխությունների նախաձեռնություններ՝ ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության համար» թեմայով կոնֆերանս, որի նպատակն էր հանրությանը ներկայացնել օրենսդրական այն փոփոխությունների անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանական մեխանիզմների ստեղծմանը և նրանց՝ հասարակության մեջ ինտեգրմանը:

Կոնֆերանսը կազմակերպվել էր Վրաստանում Նիդերլանդների Թագավորության դասպանատան ֆինանսական աջակցությամբ իրականացվող «Օրենքի գերակայությունը հանուն փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությանը Հայաստանում» ծրագրի շրջանակներում:

## ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ. ԵԼՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՇՆՈՐՀԱՆԴԵՍՆԵՐ

Բացման խոսքով հանդես է եկել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը:

Ողջույնի խոսքով ելույթ են ունեցել Վրաստանում Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Ֆլուր Նուիտեն-Էլզինգան, Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Ջուդիթ Ֆարնուորթը, Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Մաթիաս Քիսլերը և Բաց Հասարակության Հիմնադրամներ-Հայաստան կազմակերպության նախագահ Լարիսա Մինասյանը:

Առաջին նիստի ընթացքում տեղի են ունեցել «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի կողմից իրականացված «Տրանսգենդեր անձանց սեռափոխության կարիքները. իրավական խոչընդոտների գանահատում», «Սեռափոխության վիրահատության իրավական կարգավորումները» և «ԳԲՏ / SUS անձանց ծառայությունը ՀՀ Զինված ուժերում» հետազոտությունների շնորհանդեսները:

Երկրորդ նիստի ընթացքում ելույթներով հանդես են եկել բանախոսներ Իզաբելլա Սարգսյանը /Եվրասիա Համագործակցության Հիմնադրամ, Հաաստան/, Հայկ Աբրահամյանը /Բաց Հասարակության Հիմնադրամներ – Հայաստան/ և Անահիտ Սիմոնյանը /Հակախտրականության կոալիցիա/:

Կոնֆերանսին ներկա են եղել նաև Հայաստանում Ֆրանսիայի հանրապետության դեսպան Ժան-Ֆրանսուա Շաղպանտյեն, ներկայացուցիչներ Ամերիկայի միացյալ նահանգների դեսպանատնից, Հայաստանում Եվրոպական միության պատվիրակությունից, ՀՀ Փաստաբանների պալատից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, իրավապաշտպան հասարակական կազմակերպություններից և ՀՀ Զինվորական կոմիսարիատից:

ՀՀ Արդարադատության և Առողջապահության նախարարություններից և Ազգային ժողովից, ցավոք, ներկայացուցիչ չի մասնակցել կոնֆերանսին:

Ընդհանուր առմամբ կոնֆերանսի ներկա է եղել 40 մասնակից:

## ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իր խոսքում «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ի նախագահ Սերգեյ Գաբրիելյանը նշել է, որ ՀԿ-ն բարձր է գնահատում Եվրոպական երկրների և Ամերիկայի Միացյալ Նահանգների որդեգրած քաղաքականությունը Հայաստանում ժողովրդավարական արժեքների կայացման և ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում: Անդրադառնալով ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ոլորտում ՀԿ-ի ձեռքբերումներին և միջազգային համագործակցության փորձառությանը՝ ՀԿ նախագահը հավելել է, որ խտրականության դեմ պայքարելու և ԼԳԲՏԻ անձանց հիմնահարցերը բարձրացնելու հարցում էական նշանակություն ունի Հայաստանի իշխանության հետ համագործակցությունը: «Հոմոֆոբիայի և տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրը կոչված է բարձրաձայնելու և վերհանելու ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության և հավասար հնարավորությունների ապահովման հիմնահարցերը ողջ աշխարհում: Մենք՝ որպես մարդու իրավունքների պաշտպանության ջատագովներ, հայտնում ենք մեր համերաշխությունը օրվա խորհրդի կապակցությամբ և հետագա ավելի ընդգրկուն համագործակցության պատրաստակամությունը»,-իր խոսքն այսպես է եզրափակել Ս Գաբրիելյանը:

Միջազգային դիվանագիտական կառույցների ներկայացուցիչները իրենց ելույթներում կարևորել են օրվա խորհուրդը Հայաստանում ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների մշակման ու կիրարկման և հավասարության ստեղծման տեսանկյունից, անդրադարձել են ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության գործընթացներին եվրոպական երկրներում, ինչպես նաև այդ ուղղությամբ Հայաստանում միջազգային կառույցների որդեգրած քաղաքականությանը: ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանության ու հավասարության խթանումը և արժանապատիվ կյանքով ապրելու, հարգալից վերաբերմունքի արժանանալու խրախուսումը առաջնային նշանակություն ունեն Հայաստանում գործող միջազգային դիվանագիտական կառույցների համար, ուստի հանդիպման խոսնակները նշել են, որ իրենք պատրաստակամ են իրենց փորձը կիսելու խտրականության դեմ օրենքներ մշակող այլ երկրների, այդ թվում Հայաստանի հետ և նպաստելու հավասարության ու հանդուրժողականության խթանմանը թե՛ ազգային, թե՛ միջազգային մակարդակներում:

Շնորհանդեսների ժամանակ հրավիրված դիվանագիտական, միջազգային, պետական կառույցների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ներկայացվել են տրանսգենդեր համայնքի շրջանում սեռափոխության խնդրին առնչվող կարիքները, դրանց բավարարման խոչընդոտները (ինչպիսիք են օրինակ իրավական-օրենսդրական բացերը), դրանց հետևանքները և տրանսգենդեր համայնքի խնդիրների համակարգային լուծման նախընտրելի ուղիները, սեռափոխության իրավական կարգավորումների մի շարք առաջարկություններ՝ սեռափոխությունը կարգավորող նորմերի ներդրում, սեռափոխության վիրահատության կատարման պայմանների նախատեսում, սեռափոխված անձանց փաստաթղթային տվյալների փոփոխության հնարավորության նախատեսում, ՀՀ տարածքից դուրս արված վիրահատությունների խնդրի կարգավորում և գաղտնիության պահպանման

խնդրի կարգավորումների նախատեսում, ինչպես նաև ԼԳԲՏԻ անձանց զինվորական ծառայության հիմնախնդիրները:

Երկրորդ նիստի ընթացքում բանախոսները անդրադարձել են ՀՀ ոչ պետական կառույցների կողմից խտրականության կանխարգելման միջոցներին և մասնավորապես խտրականության բոլոր տեսակների վերացման գործընթացներում հասարակական կազմակերպությունների ձեռքբերումներին ու խնդիրներին:

## ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

Կոնֆերանսի վերաբերյալ հրավիրված դեսպանները և փոխդեսպանները իրենց կարծիքները հրապարակել են միջազգային դիվանագիտական կառույցների ֆեյսբուքյան էջերում:

Վրաստանում Նիդերլանդների Թագավորության փոխդեսպան Ֆլուր Նուիտեն-Էլզինգա. «20 տարի առաջ իմ ընկերներից մեկը պատմեց իր հայրիկին, որ ինքը նույնասեռական է: Հայրիկի առաջին հարցն էր՝ ի՞նչ կարող ես ձեռնարկել՝ դա ուղղելու համար»: Փոխդեսպանը իր խոսքն ավարտեց՝ նշելով, որ իր ընկերոջ հայրն ընդունեց վերջինիս այնպիսին, ինչպիսի որ կար:

Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության դեսպան Ջուդիթ Ֆանուորթ. «Հոմոֆոբիայի ու տրանսֆոբիայի դեմ պայքարի միջազգային օրվա կապակցությամբ Հայաստանում Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության արտակարգ և լիազոր դեսպան դեսպան Ջուդիթ Ֆանուորթը ճաշի էր հրավիրել ԼԳԲՏ հարցերով զբաղվող հայկական կազմակերպությունների ներկայացուցիչների՝ ԼԳԲՏ անձանց հավասարության խնդիրները քննարկելու և ՀԿ-ների աշխատանքների մասին տեղեկանալու նպատակով: Այնուհետև դեսպանը բացման խոսքով է հանդես եկել «Նոր սերունդ» ՀԿ-ի կողմից կազմակերպված կոնֆերանսին, որի նպատակը ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված օրենսդրական բարեփոխումների քննարկումն էր: Իր խոսքում դեսպանը նշել է, որ ՄԹ կառավարությունը հանձն է առել պայքարել ցանկացած տիպի, ներառյալ՝ սեռական ուղղվածության և գենդերային ինքնության դեմ խտրականության: «Մենք հանձն ենք առել խթանել լեսբուհի, գեյ, բիսեքսուալ և տրանսգենդեր անձանց իրավունքները: Դրանք հատուկ իրավունքներ չեն: Դրանք զուտ ԼԳՏԲ անձանց՝ մնացած բոլոր քաղաքացիների նման արժանապատիվ կյանքով ապրելու, հարգալից վերաբերմունքի արժանանալու և իրավունքներ ունենալու մասին է: Մարդու իրավունքները համընդհանուր են և պետք է հավասարապես կիրառվեն բոլորի համար:

Միացյալ Թագավորության օրենսդրությունը խտրականության կանխման տեսակետից առաջիններից է աշխարհում, և մենք պատրաստ ենք մեր փորձը կիսել խտրականության դեմ օրենքներ մշակող այլ երկրների, այդ թվում՝ Հայաստանի հետ: Ամենաուժեղը, ամենաապահովն ու ամենաբարեկեցիկն այն հասարակություններն են, որոնցում քաղաքացիները կարող են ապրել ազատ՝ առանց բռնության կամ խտրականության վախի, և որտեղ ԲՈԼՈՐ քաղաքացիները կարող են լիարժեք և ակտիվ դեր խաղալ հասարակության

մեջ: Ահա թե ինչու է ՄԹ կառավարությունը, ներառյալ Արտաքին գործերի և համագործակցության նախարարությունը, մտադիր շարունակել հավասարության և հա նդուրժողականության խթանումը թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակներում»:

Հայաստանում Գերմանիայի Դաշնային Հանրապետության դեսպան Մաթիաս. Քիսլեր. Դեսպան Մաթիաս Քիսլերն իր ողջույնի խոսքում ներկա գտնվող ՀԿ-ներին հորդորեց չթուլացնել ԼԳԲՏԻ-անձանց իրավունքների պաշտպանությանն ուղղված իրենց ջանքերը Հայաստանում՝ բերելով Գերմանիայի օրինակը, որը ԼԳԲՏԻ-անձանց խտրականությունից և խարանումից պաշտպանության բարելավմանն ուղղված մի շարք նախագծերի իրականացման երկար պատմություն ունի:

## ԱՆԴՐԱԴԱՐՁ ԶԼՄ-ներում

LGBTnews.am կայքը մայիսի 17-ին անդրադարձել է կոնֆերանսին՝ նկարագրելով ընթացքում քննարկված հիմնահարցերը, մասնավորապես հակախտրականության օրինագծի մշակման աշխատանքների ընթացքը, զինապարտության հարցում առկա խտրական երևույթները:

Epress.am լրատվական կայքը մայիսի 18-ին հրապարակել է «ԼԳԲՏ+ մարդիկ բանակում «խնդիրներ չունեն», բայց «հոգեկան հիվանդներ» են» վերնագրով հոդված, որտեղ անդրադարձ է կատարվել կոնֆերանսի ժամանակ քննարկված մի շարք խնդիրների՝ հայաստանյան դպրոցներում ուսուցիչները տարբերակված մոտեցում են ցուցաբերում տղաների և աղջիկների նկատմամբ, ինչպես նաև ԼԳԲՏԻ համայնքին պատկանելը համարում են անբարո, պետական և այլ կառույցներում բացասական վերաբերմունք է դրսևորվում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ, ԼԳԲՏ անձանց ՊՆ-ում որպես հոգեկան հիվանդների են վերաբերվում, բանակում ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ծայրաստիճան վատ վերաբերմունք է դրսևորվում:

## ԲԱՑԱՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կոնֆերանսի վերաբերյալ հրապարակվել են նաև քննադատական հոդվածներ, որոնք ուսումնասիրվել են 2016թ.-ի մայիսի 17-ից մայիսի 25-ն ընկած ժամանակահատվածում:

Մայիսի 17-ին Lurer.com-ը հրապարակել է «Մի շարք աղանդավորներ ներկայիս կիսապատերազմական իրավիճակում սկսել են փախչել երկրից» վերնագրով հոդված, որտեղ

հոդվածագիրը՝ Արթուր Հովհաննիսյանը, անդրադարձել է «Այլընտրանքային զինվորական ծառայության» մասին ՀՀ օրենքի վերաբերյալ քննարկմանը: ԼԳԲՏԻ անձանց անվանելով «այլասերված»՝ հոդվածագիրը մասնավորապես նշել է. «…Միջոցառման որոշ մասնակիցներ դուրս եկան ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության շրջանակից և խոսեցին ավելի լայն խմբերի, այսպես կոչված, իրավունքների պաշտպանության անհրաժեշտության մասին: Ստացվում է, որ «մարդու իրավունքներ» ասվածը' այն հասկացությամբ ու սահմանմամբ, ինչ Արևմուտքն է մոգոնել ու մեզ հրամցնում, կոչված է պետություններին, հասարակություններին այլասերելու, փչացնելու, ստրկացնելու, նրանց պաշտպանունակությունը նվազեցնելու, ժողովրդի փոքրամասնության ու մեծամասնության միջև երկպառակություն առաջացնելու, նրան թուլացնելու համար, համենայն դեպս, փաստացի ծառայում է այդ նպատակին: Ընդունելի՞ են այսպիսի «մարդու իրավունքները»… Իհարկե՛ ոչ:» Հոդվածը վերահրապարակվել է mediamall.am և lrahos.com կայքերում, ինչպես նաև Lurer.com-ի ֆեյսբուքյան էջում, որտեղ հնչել են սպառնալիքներ և ատելության կոչեր: Նշված հոդվածը սկզբնաղբյուր և վերահրապարակված կայքերում, ինչպես նաև lurer.com-ի ֆեյսբուքյան էջում ունեցել է մոտ 4629 դիտում, 320 հավանում, 12 մեկնաբանություն:

Մայիսի 18-ին «Հայոց աշխարհը» հրապարակել է «Օգտվում են առիթից» վերնագրով հոդված, որտեղ կոնֆերանսին տրվել է հետևյալ մեկնաբանությունը. «Կարծում ենք, պահի ընտրությունը ամենեւին էլ պատահական չէ: Լավ իմանալով, որ հասարակական ու քաղաքական շրջանակների ուշադրությունը սեւեռված է Արցախի հիմնախնդրի շուրջ ծավալվող գործընթացների վրա, տեղական ԼԳՏԲ ներկայացուցիչները, «արեւմտյան արժեքների» պաշտպանների օժանդակությամբ, անցել են գործի՝ գլուխ բերելու իրենց վաղեմի երազանքը»:

Այս հոդվածը վերահրապարակվել է armlur.am, hraparak.am, lurer.am, orer.am, nyut.am, pastinfo.am, tert.am, 1in.am, yerevannews.am, armarlur.com լրատվական կայքերում, իսկ Համահայկական ծնողական կոմիտեն իր ֆեյսբուքյան էջում տեղադրել է pastinfo.am կայքում վերահրապարակված նյութը: Նշված հոդվածը սկզբնաղբյուր և վերահրապարակված կայքերում, ինչպես նաև Համահայկական ծնողական կոմիտեի ֆեյսբուքյան էջում ընդհանուր առմամբ ունեցել է մոտ 2211 դիտում, 62 հավանում, 1 մեկնաբանություն:

Մայիսի 18-ին lurer.com կայքում Արթուր Հովհաննիսյանը հրապարակել է «Այլասերվածների իրավունքների պաշտպանությանը նվիրված խորհրդաժողովին նախատեսված էր նաև Արփինե Հովհաննիսյանի մասնակցությունը» վերնագրով հոդված, որտեղ մասնավորապես նշված է. «Հիշյալ միջոցառմանը լրագրողներ չէին հրավիրվել, և կարծում եմ, ոչ պատահականորեն կամ մոռացկոտության արդյունքում: Բոլոր հիմքերն ունեմ մտածելու, որ կամ ամաչել էին հրավիրել, քանի որ խորհրդաժողովում հիմնական խոսքը, քննարկումը լեսբուհի, գեյ, բիսեքսուալ, տրանսվիստիտ անձանց, այսինքն' այլասերվածների, այսպես կոչված իրավունքների պաշտպանության մասին էր, կամ էլ զգուշացել էին' շատ լավ պատկերացնելով, թե ինչպիսի հրապարակումներ են դրանից հետո սպասվում: Ընդգծեմ, որ Հայաստանում այլասերվածներին անթույլատրելի իրավունքներ (իբր նրանց ունեցածը դեռ քիչ է) տալու ջատագովներն ակնհայտորեն վայելում էին խորհրդաժողովին մասնակցող և ելույթներով հանդես եկող Վրաստանում Նիդեռլանդների Թագավորության փոխդեսպան Ֆլուր Նուլտեն-Էլզինգի, Գերմանիայի դեսպան Մաթիաս Քիսլերի, Մեծ Բրիտանիայի դեսպան Ջուդիթ Ֆարնուորթի աջակցությունը, որոնց, եթե ես լինեի ՀՀ նախագահը կամ արտգործնախարարը, «պերսոնա նոն գրադա» (անցանկալի անձ) կհայտարարեի»: Հոդվածը վերահրապարակել են lrahos.com և mediamall.am կայքերը, ինչպես նաև այն տեղադրվել է Հայահայկական ծնողական կոմիտեի էջում: Ըստ մեր ուսումնասիրությունների՝ նշված հոդվածը սկզբնաղբյուր և վերահրապարակված կայքերում, ինչպես նաև Համահայկական ծնողական կոմիտեի ֆեյսբուքյան էջում ընդհանուր առմամբ ունեցել է մոտ 5816 դիտում, 349 հավանում, 1 տարածում և 15 մեկնաբանություն:

Մայիսի 19-ին «Հայոց աշխարհը» «Ինչո՞վ է բացատրվում ԼԳԲՏ համայնքի աննախադեպ ակտիվացումը» վերնագրով հոդված, որտեղ հոդվածագիրը՝ Ս. Առաքելյանը, ներկայացրել է կոնֆերանսի մանրամասները: Սակայն այս հոդվածում ներկայացվել են փաստեր, որոնք չեն համապատասխանում կազմակերպիչ կողմի հետապնդած նպատակներին, մասնավորապես այն, որ կոնֆերանսի կազմակերպիչները

պետք է իրենց պատրաստած օրենսդրական նախաձեռնությունները փոխանցեին գերատեսչությանը, և նախարարի և փոխնախարարի բացակայությունը ձախողել է նրանց ծրագիր, նաև այն, որ ծրագրերն իրագործելու համար հկ-ներն ընտրել են հենց այս ժամանակահատվածը, երբ Հայաստանի առաջ ծառացած են քաղաքական ու տնտեսական լուրջ մարտահրավերներ, իսկ հասարակության ուշադրությունը կենտրոնացած է ԼՀ հիմնախնդրի եւ սահմանին տիրող իրավիճակի շուրջ: Նշված հոդվածը վերահրապարակել են blognews.am, iravunk.com, andradardz.am, orer.am, tert.am, shabat.am, pastinfo.am լրատվական կայքերը: Armarlur.com կայքում Ս. Առաքելյանը հրապարակել է «Ինչո՞վ է բացատրվում ԼԳԲՏ համայնքի աննախադեպ ակտիվացումը» հոդվածը, որը infoleader.am-ը վերահրապարակել է և տարածել իր ֆեյսբուքյան էջում: Այս հոդվածի շուրջ ակտիվ քննարկումներ չեն ծավալվել, այն, ըստ մեր ուսումնասիրությունների, տարածվել է 18 անգամ և ունեցել է մոտ 35 հավանում:

«Հայոց աշխարհը» նաև հարցազրույցներ է ունեցել «Համահայկական ծնողական կոմիտեի» նախագահ Արման Բոշյանի և ՀՀԿ խորհրդարանական խմբակցության անդամ Ռուզաննա Մուրադյանի հետ:

Մայիսի 19-ին ֆեյսբուքյան օգտատեր Քրիստ Մանարյանը իր էջում տեղադրել է հետևյալ մեկնաբանությունը. «Այսինքն մեր տղերքը գնան թուրքի դեմ կռվեն, զոհվեն, երկիրը հրաշքով փրկեն, իսկ սեռական փոքրամասնությունները հանձինս ՝նոր սերունդ՝ հ/կ-ի ԼԳԲՏ համաժողովներ անցկացնեն Անի փլազայում ու դեռ մարդու իրավունքների պաշտպանին և արդարադատության նախարարին էլ հրավիրե՞ն...ասենք թե երկուսն էլ չեն ներկայացել, ի պատիվ իրենց: Բայց քանի՞ գլխանի են էդ համասեռամոլները, որ էդպես արխայնացել են մեր պատերազմող երկրում...էրևում ա՝ վաղուց բար-մար չենք գմփցրել, դրանից ա: Քացու տակ ա պետք գցել բոլոր էդ ՝նոր սերունդներին՝, ովքեր մոլախոտերի պես աճել են մեր հանդուրժողականության շնորհիվ ու փորձում են աղավաղել էս ազգի ազնիվ դեմքը: Վախտն ա ձեզնով կպած զբաղվելու՝ ուշադրությունից պլստացել էիք էս արանքում, երրորդ սորտի թուլեք»:

Մեկնաբանությունը վերահրապարակել են openblog.am, henaran.am, asekose.am, blog.1in.am, blognews.am, yelaket.am, boombest.ru, magnis.news՝համապատասխանաբար այն տարածելով իրենց ֆեյսբուքյան էջերում, իսկ Համահայկական ծնողական կոմիտեն տարածել է blog.1in.am-ի հրապարակած մեկնաբանությունը: Ըստ մայիսի 19-ից մայիսի 25-ն ընկած ժամանակահատվածում մեր կատարած ուսումնասիրության՝ այս մեկնաբանությունը, վերջինիս վերահրապարակումները և ֆեյսբուքում տարածած հղումները ընդհանուր առմամբ ունեցել են մոտ 26,390 դիտում, 4464 հավանում, 300 տարածում, 235 մեկնաբանություն:

## ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՔԱՅԼԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ



Հարգելի պ-ն Գասպարյան,

«Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ իրավապաշտպան հասարակական կազմակերպությունն է, որն իրավախնամություն է մատուցում, իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության ուղղված գործառույթներ: Աշխատանքներ է իրականացվում նաև առողջապահության ոլորտում: ՄԻԱԿ-ի կոնվենցիոնալ ազատություններ: Իրավապաշտպանի գործունեության իրականացմանը «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ-ն առաջնորդվում է խորհրդանշության, ստանդարտների խոսքի և խղճի ազատության դեպքերի բացարձակ բաց դարձնելու սկզբունքով:

Մայիս թվականի մայիսի 19-ին 09:55 սահմանվածում Քրիստո Մանարյան անվանումով ֆիզիկական օգտագործող իր ֆիզիկական էջում հայտարարություն է տարածել, որտեղ մասնավորապես գրված է «Ընդհանուր մեր տարածքում դեռևս թաքնված բոմբերի հետքերով մեկին, ինչպես նաև հետքով մեկին, ինչ սեռական ցեղասպանություններ հանձնելու նոր սերունդ ինչ-ի ԼԳԲՏ հանանդամանքներ անվանելին Մեր արարքում ոչ ոք մեղավոր, հոգեկանների պաշտպանների և սոցիալական դեպքերի հետևանքն է, սակայն թե հոգևորն է՝ չեն կիսվում... հանուն մեծության բարձրագույն հոգու... հանուն ինչ-ի՝ ինչ կիսվում... և սասին, ինչու Բաց քանի գնալուն են իր հանանդամանքներ, որ հարգեն տարեսանուն են մեր պատերազմներ հոգում... հանուն մեծության բարձրագույն հոգու՝ մեր հոգեկան հանգամանքներ հանանդամանքներ, ինչպես Քրիստոս տանում անում գալու բարձրագույն հոգու և նոր սերունդներին, ոչինչ մեղավորների պես սակայն մեր մեղավորներին մեր հանանդամանքներ հանանդամանքներ հանանդամանքներ

նախաձեռնած միջոցառումներից հետո համացանցում ստեղծվել է ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ ատելության խոսք և թշնամանք տարածող կայք՝ **http://stop-g7.com/**, որում հրապարակված նյութերը մի քանի էջերով ու մի խումբ մարդկանց կողմից տարածվում են Facebook-ում: Կայքը երկլեզու է՝ հայերեն և անգլերեն, և մինչ այժմ այնտեղ հրապարակվել են **«Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը համասեռամոլություն է քարոզում»**, **«Այլասերվածների և իրենց հովանավորների օպերացիան Հայաստանում»**, **«ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի և Գերմանիայի դեսպանների մասնակցությունը այլասերվածների փակ հավաքին»** և **«Այլասերվածների պաշտպան Լարա Ահարոնյան, «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի նախագահ»** հոդվածները հայերեն և ռուսերեն թարգմանություններով, որոնք չեն մեկնաբանվել կայքում, բայց փոխարենը stop-g7.com կաքի և Համահայկական ծնողական կոմիտեի ֆեյսբուքյան էջերում ունեցել են ընդհանուր առմամբ մոտ 366 հավանում, 212 տարածում և 143 մեկնաբանություն:

«Հայոց աշխարը» մայիսի 28-ին հրապարակել է **«Միայն ժողովրդի դիմադրությամբ հնարավոր կլինի կանխել այլասերումների օրինականացումը Հայաստանում»** վերնագրով հարցազրույց «Հանուն ինքնիշխանության վերականգնման» նախաձեռնության հիմնադիր անդամ Հայկ Այվազյանի հետ: Այն վերահրապարակվել է http://armsovereignty.com/ կայքում և տարածվել Հայահայկական ծնողական կոմիտեի էջում և ունեցել մոտ 32 հավանում, 3 տարածում և 2 մեկնաբանություն:

Ի պատասխան՝ LGBTnews.am կայքը հրապարակել է **«Հոմոֆոբիայի կեղծ ալիք, կամ ինչու են աղմկում մարգինալները»** վերնագրով հոդված, որտեղ հոդվածագիրը փորձել է մեկնաբանել վերոնշյալ հրապարակումների պատճառները:

## ԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

«Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» հոդված 1-ին «Բոլոր մարդիկ ծնվում են ազատ ու հավասար՝ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով: Նրանք օժտված են բանականությամբ և խղճով, և պարտավոր են միմյանց նկատմամբ վարվել եղբայրական սիրով»: Սույն հռչակագիրը վերաբերելի է նաև Հայաստանի Հանրապետությանը քանզի Հայաստանի Հանրապետությունը Միավորված Ազգերի Կազմակերպությանը անդամակցում է 1992 թվականի մարտի 2-ից, ուստի ՄԱԿ-ի անդամ յուրաքանչյուր պետություն ստանձնում է այս իրավունքերի և ազատությունների նկատմամբ հարգալից վերաբերմունքի, ազգային և միջազգային համընդհանուր արդյունավետ ճանաչման ու պահպանման պարտավորություն: Բարձր պայմանավորվող յուրաքանչյուր կողմ՝ Պետություն, պարտավորվում է կրթության միջոցով նպաստելու այս իրավունքերի և ազատությունների տարածմանը:

Անցում կատարելով 2016 թվականի մայիսի 17-ին տեղի ունեցած միջոցառմանը և դրան հաջորդաց վերոնշյալ էլեկտրոնային լրատվամիջոցների կողմից հրապարակված հոդվածներին կարող ենք փաստել, որ նույնիսկ լրատվամիջոցները իրենց նյութերում հանդես են գալիս հրապարակային ատելության խոսքերով, որոնք հակասում են Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 1-ին հոդվածին: Մասնավորապես՝«Հայոց աշխարհը» մայիս 28-ին հրապարակել է «Միայն ժողովրդի դիմադրությամբ հնարավոր կլինի կանխել այլասերումների օրինականացումը Հայաստանում» թեմայով հոդված: Այն իր ներքո ունեցավ բազմաթիվ մեկնաբանություններ լի սպառնալիքներով, հաշվեհարդար տեսնելու մտադրություններով, պատվի, արժանապատվության ոտնահարման և ատելության կոչերով:

**Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (06.12.2015թ.) 29**-րդ հոդվածի համաձայն **«Խտրականությունը կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, խնամքից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից արգելվում է»**: Այն մեկնաբանությունները, որոնք բացառապես վերաբերելի են լրատվամիջոցի կողմից հրապարակած նյութերին, իքնին խտրականության դրսևորման ակտնհայտ գործողություններ են:

Մասնավորապես՝ **«պետք է հավաքվել և նրանց դուրս շպրտել այս երկրից: Դրանց նմաններին պետք ուղարկել Ադրբեջան: Դրանք իրավունք չունեն հասարակության մաս լինելու»**:

Մայիսի 19-ին ֆեյսբուկյան օգտատեր Քրիստ Մանարյանը հանդես էր եկել գրառումով, որը պարունակում էր բացահայտ սպառնալիքի և ատելության կոչեր: Այդ կոչերը հնչում էին թիրախավորված կազմակերպության անունով իսկ հասարակությունը ավելի էր զարգացնում ստեղծված ոչ իրավաչափ վարքագծի կարգավիճակը: Օգտատեր Քրիստ Մանարյանը կոչ էր անում մարդկանց՝ **«Այսինքն մեր տղերքը գնան թուրքի դեմ կռվեն, զոհվեն, երկիրը հրաշքով փրկեն, իսկ սեռական փոքրամասնությունները հանձինս՝նոր սերունդ՝ հ/կ-ի ԼԳԲՏ համաժողովներ անցկացնեն Անի փլազայում ու դեռ մարդու իրավունքների պաշտպանին և արդարադատության նախարարին էլ հրավիրե՞ն…ասենք թե երկուսն էլ չեն ներկայացել, ի պատիվ իրենց: Բայց քանի՞ գլխանի են էդ համասեռամոլները, որ էդպես արխայնացել են մեր պատերազմող երկրում…էրևում ա՝ վաղուց բար-մար չենք գմփցրել, դրանից ա: Քացու տակ ա պետք գցել բոլոր էդ՝նոր սերունդներին՝, ովքեր մոլախոտերի պես աճել են մեր հանդուրժողականության շնորհիվ ու փորձում են աղավաղել էս ազգի ազնիվ դեմքը: Վախտն ա ձեզնով կպած զբաղվելու՝ ուշադրությունից պլստացել էիք էս արանքում, երրորդ սորտի թուլեք»**: Տվյալ գրառման շրջանակում «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպությունը համապատասխան իրավապահ մամին գրություն է ուղարկել Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ, 39-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով իրավական պաշտպանություն ստանալու ակնկալիքով:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 39-րդ հոդվածի համաձայն «Մարդն ազատ է անելու այն, ինչը չի խախտում այլոց իրավունքները և չի հակասում Սահմանադրությանն ու օրենքներին...»: Մեկնաբանման առումով «Նոր Սերունդ» Մարդասիրական ՀԿ երբևէ չի գործել օրենքի շրջանակներից դուրս, չի խախտել և չի սահմանափակել օրենքով պաշտպանվող այլոց իրավունքներն ու ազատությունները: Մեր կազմակերպության կողմից կատարված և կատարվող յուրաքանչյուր գործողություն համընդգրկուն է մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու համամարդկային մոտեցումներին:

Եվրոպական միության խտրականության դեմ հրահանգների տեսանկյունից հետապնդումը բնութագրվում է որպես խտրականության առանձնահատուկ տեսակ: Նախկինում այն դիտարկվել է որպես ուղղակի խտրականության դրսևորում: Համաձայն խտրականության դեմ հրահանգների՝հետապնդումները համարվելու են խտրականության դրսևորումներ, երբ տեղի է ունենում անցանկալի վարքագիծ՝պայմանավորված որոշակի հատկանիշով, անձի արժանապատվությունը վիրավորելու նպատակով կամ հետևանքով, կամ ստեղծելով ահաբեկող, թշնամական, ստորացնող նվաստացնող և վիրավորող

մթնոլորտ: Ելնելով խտրականության դեմ այս հրահանգներից և ձեռք բերված փաստահավաք նյութերից հստակ կարող ենք տալ իրավական եզրակացություն առ այն, որ թե՛ էլեկտրոնային լրատվամիջոցները, թե՛ այդ հոդվածների տակ զետեղված մեկնաբանությունները, թե՛ հանրության կողմից ծանաչված անձանց կողմից հրապարակված կարծիքները խտրականության, ահաբեկող, թշնամական, ստորացնող և վիրավորական գործողություններ են ուղղված իրավապաշտպան գործունեությամբ զբաղվող քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Փաստական հանգամանքները, որոնց հիման վրա վարքագիծը կարող է դիտարկվել որպես հետապնդում, սովորաբար ուսումնասիրվում են ազգային մակարդակում մինչև միջազգային պաշտպանության մեխանիզմների դիմելը: Սակայն ձևավորված ներպետական դատական պրակտիկան վկայում է այն մասին, որ տվյալ իստիտուտը ուղղակի բացակայում է, և ոչ մի կերպ հնարավոր չէ ներպետական մակարդակով հասնել խտրականության գործերով արդյունավետ և ամբողջական դատավարական քննության:

Ի լրումն այս ամենի՝ խտրականության դեմ բոլոր հրահանգները սահմանում են, որ «խտրականության հրահրումը» համարվում է «խտրականություն»:

Հետապնդումները և խտրականության հրահրումը Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի տեանկյունից առանձնացված կերպով առանձնացված չէ, սակայն այնուամենայնիվ այս ոլորտում այն նախատեսում է որոշակի իրավունքներ: Համատեքստից կախված խտրականության հրահրումը կարող է քննարկվել է այլ հոդվածների տեսանկյունից, օրինակ՝ 9-րդ 11-րդ հոդվածները կրոնի կամ միավորումներ ստեծելու իրավունքների առումով: Երբ գործողություններում նկատվում է խտրական դրդապատճառներ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ուսումնասիրում է համապատասխան հոդվածների խախտումները խտրականություն արգելող 14-րդ հոդվածի համակցությամբ: Օրինակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործ «Բաչովսկին և այլոք ընդդեմ Լեհաստանի (Bachovski and others v. Poland) թիվ 1543/06 3 մայիսի 2007 թվական»:

Վերոնշյալ լրատվամիջոցների բացասական հրապարակումները պետք է վերագրել, որպես անձի կամ անձանց խմբի հատկանիշ կամ առանձնահատկություն, որի հիմքով դրսևորվել է խտրական վերաբերմունք: Այս դեպքում հատկանիշը կամ առանձնահատկությունը դա «Նոր Սերունդ» Մարդասիրական հասարակական կազմակերպության իրավապաշտպան գործունեությունն է ուղղված ԼԳԲՏԻ անձանց իրավունքների պաշտպանությանը, ինչպես նաև թիրախավորված են ԼԳԲՏԻ համայնքի ներկայացուցիչները: Այսպիսի հատկանիշը ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված չէ որպես խտրականության արգելքով պաշտպանված հիմք : Եթե խտրակնությունը դրսևորվել է այնպիսի հատկանիշով, որն ամրագրված չէ միջազգային կամ ազգային իրավական փաստաթղթում , ապա իրավական պաշտպանության հայցել չենք կարող՝ նյութական իրավունքի բացակայության հիմքով: Օրինակ՝ՀՀ Սահմանադրությունը նշում է «սեռը» որպես պաշտպանված հատկանիշ, իսկ «սեռական կողմնորոշումը»՝ ոչ: Այս հիմքը բնականաբար բացակայում է նաև ներպետական օրենսդրության մեջ: Այդուհանդերձ, Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 14-րդ հոդվածով «սեռական կողմնորշումը» ճանաչված է որպես պաշտպանված հատկանիշ: Հետևաբար ազգային դատարան կարող ենք վկայակոչել ՄԻԵԿ 14-րդ հոդվածը: Հատկանշական է այն, որ Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 12-րդ Արձանագրությունը, որի 1-ին հոդվածը սահմանում է խտրականության համընդհանուր արգելք՝ անկախ հիմքից:

«ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ» ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՀԿ

«NEW GENERATION» HUMANITARIAN NGO

Էլ-հասցե: newgenerationngo@gmail.com | http://ngngo.net/